


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Քաղաքի Գեղարքունիքի Գեղարքունիքի Գեղարքունիքի



ՊԱՅՄԱՆՔ

ԵՊԻՊՏՈՍ

Տարեկան դրո - ողջ 30

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան փրակ 10

Բաժանորդի ԶԱՒԵԼՈՒՄ ՆԵՐԱՎ ՓՈԼՍԱՐԷՆ ԳԵՐԱՄԱՒԷ ԳԵՐՈՒ ԱՅԻՒ ԸՂԱՄ .

Ձի հրատարակումը ձեռագիրները ևս չի՛նք տրուիր :

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թե՛ ԱՐՇԱԼՈՍՄԻՒ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ Վերաբերեալ նիւթական խնդրոց համար պիտի կ ղիւնէլ ներքազրուրեան հասցեով քերթիս Մասնախարհիկ , որ կ՛

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

ՕՐԳԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՊԱՒ ԿՐՈՒԹԵԱՆ

ԳԵՐՈՐԴ ՓԱՓԱԶՆԵԱՆ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ :

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները սեղանի դրոշմաւորուած սու ին իրենց գրածներու

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԸ

ՁԻՆՈՒՈՐԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ

Այսօրուան ազգային լրոց բաժնին մէջ « Արեւելք »-ին արտադրութիւն մը եղած է , որուն վրայ հարեանցի ակնարկ մը նետել կարեւորութենէ զուրկ չէ :

Օսմ . Երեսօրեանութեան հայ անդամներէն երկուքը , Գրիգոր Եֆ . Չօհրապ և Վարդգէս Թուրքիոյ Նախարարակազմին ներկայանալով պահանջած են որ Վանայ , Խիզաւնի և Մուշի նահանգներուն հարրատահարիչները , աւազակացիտ չիւսէյին , բռնապետ Շաքիր և Ջալալէֆտիլի որդի Սէյիտ Ալի նազըր մուխաֆիսի օրէնքով՝ ուրիշ նահանգի մը դատարանին առջև դատուին , և արգարտութիւնը ամենայն խստութեամբ գործադրուի :

Մեր երկու Երեսօրեաններուն այս վճռական քայլը ամէն գնահատումէ ալ վեր կը մնայ . թէպէտեւ պէտք էր որ՝ իրենց գիմուսին աւելի պաշտօնական ձև մը տալու և ազդեցութիւնը աւելի բազմապատկելու համար , ո՛չ միայն իրենց միւս հայ պաշտօնակիցներն ալ միասին ունենային - եթէ ո՛չ անձամբ գէթ անոնց ձայներով - այլ և՛ Պօլսոյ հայոց Պատրիարքարանն ալ այդպիսի գիմուսի մը աւելի իրենց ազդեցիկ և պաշտօնական ներկայացուցիչը ունենար իրենց հետ :

Արդարև Օսմանեան Խորհրդաբանի այս երկու անդամները թէև պաշտօնական հանդամներ կը ներկայանան , սակայն ի նկատի ունենալով Օսմանեան կառավարութեան մինչև ցարդ ցոյց տուած անտարբերութիւնը դաւաճներու հարրատահարութեանց , կեղեքումներու , սպանութեանց և խոշտանկութեան հանդէպ , այն ատեն հարկ անհրաժեշտ կ'ըլլայ եղած գիմուսին ուժը աւելցնելու պարագաները նկատողութենէ չի վրկայենել :

Այսպէս ըլլալով հանդերձ՝ եղած գիմուսը ուշ կամ կանուխ իր օգուտները պիտի ունենայ անտարակոյս . թէպէտև « Արեւելք » նախարարակազմին այս առթիւ տուած պատասխանը մէջ չ'ընդունիր արձանագրած ծանօթութեանց հետ :

Խորհրդարանի վերոյիշեալ երկու հայ անդամոց նախարարակազմին ներկայացուցած երկրորդ խնդիրն է հայերէն լինուոր առնուի :

Գիրն է հայերէն լինուոր առնուիլու հարցը , որ Հոգեւոյս ներսէս Պատրիարքի օրէն ի վեր կը յուղուի և իրարու յաջորդող Ազգ . Ժողովոց սեղանին վրայ մնացած է միշտ , առանց վերջնական որոշումի մը յանգելու :

Ինչպէս ամէն դաւաճացի հայու ծանօթ է , հայերը երբև Օսմանեան հպատակ ազգ , փոխանակ իշխող տէրութեան լինուորական ծառայութեանը մէջ մտնելու , տարեկան որոշ գումար մը կը վճարեն « պէտէլաթը ասքէրիյէ » անունով . Մայրաքաղաքի բնակիչները գլխավորին զերծ են այս կարգի վճարումներէ :

Իւրաքանչիւր Օսմ . հպատակ հայ դաւաճներու մէջ ծնած օրէն սկսեալ այդ տուրքը կը վճարէ և թէպէտև « պէտէլաթը ասքէրիյէ » համար կառավարութենէն որոշեալ լուծ գումարը իւրաքանչիւր անհատի համար 27 դր . է , սակայն շատ անգամ պատահած է որ Օսմ . կառավարութեան կերպով որոշած այդ գումարին քանակը մինչև դաւաճներու խորքը հասնիլը , աճելով և բազմանալով 50-70 և աւելի զրուշներու բարձրացած է :

Այսպէս ըլլալով մեկտեղ , կարծողներ կան թէ՛ անհատ գլուխ տարեկան այսպիսի տուրք մը վճարելը աւելի լուրջոյն է և տանելի , քան թէ՛ լինուորական ծառայութեան մտնել ա՛յնպիսի կառավարութեան մը զորաբանակներուն մէջ , ուր ուստիտի և հազուատի չդոյութեան երեսէն շատ անդամներ ահագին խրատումներ տեղի ունեցած են և կուսնան :

Թողունք սա ծանրակշիւ պարագան թէ՛ հիմայ դաւաճները այր մարգերէ արգէն դատարկացած՝ ուրաժութեանց , խոյլխոյմանց , մորթոտումներու և անտարալութենէ մեանդներու պատճառաւ , փոքրիկ և աննշան ազէտ մը չ'պէտք է համարել լինուորագրութիւնը դաւաճարեանկ հայութեան համար :

Զինուոր մը՝ ըլլա՛յ հայ , ըլլա՛յ թուրք , անգամ մը բանակի մը մէջ լինուորական ծառայութեան մտնելէ յետոյ իր անձին տէրը չէ . օրէնքին և փամանակին պահանջմանց պիտի հպատակի . կառավարութեան անօրինութենէն կտրեալ է այսինչ զօրագունըր այն ինչ տեղը փոխադրելու հարցը : Այդ պարագային հայ

զարաւոր հայ կիներ ու նոր հարսեր կերպով մը այրիացած պիտի ըլլան , և նոյնպիսի հազարաւոր անպահաճ ամուսիններ ալ գրեթէ որբացած , և անատներու պիտի մնան :

Դաւաճներու մէջ ապրող մը՝ շատ անգամներ հանդիպած է թէ՛ լինուորագրութեան եղանակներու մէջ ի՛նչ սրտաճճիկ լաց ու կոծեր կը պատահին և ի՛նչ ազիխարչ վայնատներ կը լսուին և սրտակտուր պատկերներ կը դժուին ակնատեսին առջև , երբ զուրախ գործողութիւնները կը կատարուին և այսինչին կամ այնինչին լինուորական ծառայութեան վիճակը կ'իշխայ :

Սակեայ տակաւին թուրք լինուորներուն համար է , որոնք իրենց հայրենիքին ծառայելու կը կոչուին . . . :

Մէկ խօսքով լինուորական ծառայութեան անպատեհութիւնները շատ ու շատ են , մանաւանդ հայուն համար . . . :

Ինական է որ՝ չենք կրնար չի խոստովանիլ թէ՛ լինուորագրութիւնը իր ապագայ գերազանց և անխոստովանի օգտակարութիւններն ալ չ'պիտի ունենայ հայուն համար . սակայն այդ անխոստովանի օգուտները ձեռք բերելու համար պէտք է որ դաւաճի հայուն վիճակը տնտեսապէս և բարոյապէս բաւականաչափ բարելաւուած ըլլայ . այլապէս դաւաճի արգէն չարաչար կերպով խոշտանդուած ու վերին աստիճան տկարացած կացութիւնը լինուորական ծառայութեան ենթարկելով , Հայաստանի փողովուրդը սպանուի զտաւ , նոր և ուժեղ տերուորներ հասցնելու գործը բացարձակ դժուարութեան կը մատնուի :

Այս տեսակէտը նկատի ունելով է որ չենք կրնար գոյիլ մեր երկու հայ խորհրդարանականներու նախարարակազմին առջև ըրած յայտարարութիւնները հայերու լինուորագրութեան նկատմամբ :

Որչափ ալ երեսօրեանները քուէներով ընտրուած լիազօրներ ըլլան , չենք կարծեր որ հայաստան գործ մը ըրած կ'ըլլան լինուորական ծառայութեան համար կառավարութեան կողմէ եղած առաջարկը « մէկ հարուածով » ընդունելու պարագային :

Իրենք թերևս թշուառութիւնը անձին փորձով տեսած չ'ըլլան . և

այն որ թշուառութիւնը մտէն տեսած ու ճաշակած չէ , բուն թշուառներուն վիճակը չ'կրնար հասկընալ . հետևաբար հայ լինուորագրութեան պէս դժուարակնէիտ հարցի մը մէջ մեր երկու երեսօրեաններուն առած անպաշտօն քայլը՝ խոհականութենէ զուրկ պէտք է ներկատել . Գո՛նէ իրենց հետ պէտք է ին ունենալ մեր Պատրիարքին և Ազգային Երեսօրեան Ժողովին բացարձակ հաւանութիւնը և հրահանգները , և ատկէ զատ՝ ամէն հայ կանուխէն պէտք էր լաւ սերտած ըլլալ և ծանօթանալ այն բոլոր պայմաններուն , որոնցմով պիտի մըտնէր թուրք կառավարութեան լինուորական ծառայութեանը մէջ :

Ե . ՅՈՐՈՍԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

ՄԱՆԶՈՒՄԷ Երուսաղէմի քննիչներուն զրկուած « Հրահանգ »-ին պատճէնը ձեռք անցունելով « Երուսաղէմի նոր կանոնագիրը » վերստառութեան ներքեւ հրատարակութեան տուած է . իր կողմէ նետուեալ ծանօթութիւնը զետեղելով : « Ինչպէս յայտնի է , նախորդ Պատրիարքը (Օրմանեանին կ'աղանարկէ) . Երուսաղէմի վանքին համար նոր ներքին կանոնագիր մը խմբագրած էր , զոր Մանկուսի Եպիսկոպոս իրեն հետ Երուսաղէմ տարած էր ժամանակին » :

« Երկոյ վարդապետը հարկ դատած է բոլորովին փոխել զայն . և նոր կանոնագիր մը խմբագրել . և այս նպատակաւ խառն փողովն կարգուած էր յանձնաժողով մը , որուն կոմիտէակցէին Տ . Հմայակ Եպիսկոպոս , Ասլանեան Վարդապետ , Յ . Շահրիկեան և Յ . Գորեան Էֆէնտիները որոնք Շահրիկեան էֆէնտիի յանձնած էին նոր կանոնագիրն խմբագրութիւնը որ ցարդ հրատարակուած չէ : »

Մանկուսի արտագրելով « Արչալոյս »-ի ընթերցողներուն կը ներկայացնենք զայն , անգամ մը ևս հաստատելու համար թէ՛ Սողիմայ Միտրանութեան լուրջ մասը , ո՛ր աստիճան իրաւունք ունի հոն զընացող քննիչները քաղաքավարութեամբ ձա՛րու գնելու մէջ :

Սոյն « Նախագիծ կանոնի »-ին մէջ եթէ զարմանք պատճառելու բան մը կայ , այն ալ սա՛ է որ՝ անոր հեղինակը , Շահրիկեան է :

Ֆէնտի, թուրք կերպով « ապա-
կեղծութեան » պաշտամունքը
դաւանելով հանդերձ, Սաղիմայ
Պատրիարքութեան և Միաբանու-
թեան իրաւասութիւնները կապու-
ածով շատ սեղմ « կեղծանցումի »
մը ենթարկելու ջանքերն է, որը
չառ մը մեկնութիւններու զուտ
կրնայ բանալ... Եթէ ց'արդ նը-
կատողութիւնը վրիպած է :
ԽՄԲ.

ՆԱԽԱԳԻԾ ԿԱՆՈՆԻ

ԵՐԵՒԱՆԻ Մ. ՅԱԿՈԲԵԱՆՆԻ ՎԱՆՈՅ
ՄԱՐԹՆԱՎԱՆ ՈՒԽՏԻՆ

Հիմնական Սկզբունքներ

Ա. Ինչպէս առհասարակ բոլոր վան-
քերը՝ երուսաղէմի Ս. Յակոբայ
վանքն ու ուխտատեղիները Հայ աղ-
գի սեփական ստացուածքն են, ուս-
տի և անոնց մատակարարութիւնը,
հոտութիւնը և ծախուցը ընդհանուր
տեսչութիւնը ազգի իրաւունքն է :
(Տես Ազգ. Սահմ. Յօդ. 41րդ.)
Բ. Ինչպէս առհասարակ բոլոր վան-
քերը՝ երուսաղէմի Ս. Յակոբայ
վանքը ևս ոչ միայն ուխտատեղի է,
ալ և ազգային եկեղեցական, կըր-
թական ու դիտական զարգացման
նորարարական հիմնարկութիւններ են :
(Տես Ազգ. Սահմ. Յօդ. 48 պարբ.
ճրդ.)
Գ. Ազգը իր մատակարարութեան
հասոյթից ու ծախուց տեսչութեան
իրաւունքը կը զօրմագրէ մէն մի
վանքի՝ ինչպէս և երուսաղէմի Ս.
Յակոբայ վանուց համար ընտրած
մատակարար մարմիններու, վանու-
թեան խորհուրդի և Ազգային Ընդ-
հանուր ժողովի ներկայացուցչի մի-
ջոյսով :
Դ. Ուխտատեղիներու պաշտամանց
և կրթական-դիտական զարգացման
պարտականութիւնը Ազգին կողմէն
կը զօրմագրուի մէն մի վանքի՝ ինչ-
պէս և երուսաղէմայ Ս. Յակոբայ
վանուց միաբանութեան միջոցով :
Ե. Արդէնպէս ուխտատեղեաց պաշ-
տամունքները և դիտական-կրթա-
կան զարգացման նուիրումի պար-
տականութիւնը իրապէս կատարուի,
ինչպէս ամէն մի վանուց միաբա-
նութիւնը՝ նոյնպէս և երուսաղէմի Ս.
Յակոբայ վանուց միաբանութիւնը
կողմուած պէտք է լինի Ազգի վըս-
տահանութիւնը վայելած, բարոյական
հեղինակութիւններն ստուգուած, կըր-
թական ու դիտական հմտութիւններն
հաստատուած, առ ալ զանձնաւո-
րութիւններն վիճարկուած անդամներէ :

2. Արդէնպէս միաբանութիւնները
ամբողջապէս նորարարած լինին ի-
րենց կողմանը, բնական է որ ազատ
պէտք է լինին ապրուստի միջոցնե-
րէ, հոգեբէ, և վայելքն ուսումնա-
սիրական, մատենագրական, մաս-
նագիտական պարապմունքներու ան-
հրաժեշտ յարմարութիւնները :
Ե. Հետեւաբար Միաբանութիւննե-
րու ամէն մի անդամը պարտակա-
նութիւններ ունի առ ազգը, ինչպէս
և ազգը պարտականութիւններ ունի
առ միաբանական մէն մի անհատ :
Մէկի պարտականութիւնը միտի ի-
րաւունքն է :

Բ. Ազգի պարտականութիւնն է ուխ-
տատեղեաց կամ վանուց Միաբա-
նութեան պիտոյնցը անհրաժեշտ
ծախուցը բաւականութիւն տալ :
Թ. Միաբանութեան պարտականու-
թիւնն է անշահախնդրաբար, ա-
ռանց վարձատրութեան անկեղծու-
թեան, անձնուիրաբար ցկեանս նը-
իրուի իրենց ուխտին, յանձնուած
պաշտօնականարարութեանցը սիրալո-
ւար յանձնառու լինել, գրական,
գիտական աշխատութեան, մասնա-
գիտական ուսումնասիրութեանց,
երկասիրութեանց նուիրուիլ, ճշգիւ
յարգել և զօրմագրել վանական
կանոնը :

Կազմութիւն Միաբանութեան

1. Միաբանութիւնը կը բաղկանայ
եպիսկոպոստներէ, վարդապետներէ,
առաջ սարկաւազներէ, առաջ դպիր-
ներէ ու երուսաղէմի Պատրիարքէն
կամ անոր Տեղակալէն :
 2. Միաբանութեան անդամաց
թիւր կը հասնանուր հետեւեալ կեր-
պով .
- | | |
|----------------------|-----------|
| Պատրիարք կամ Տեղակալ | 1 |
| Եպիսկոպոստներ | 5 |
| Վարդապետներ | 40 |
| Սարկաւազներ | 18 |
| Առաջ դպիրներ | 18 |
| Գումար | 82 |

3. Պատրիարքը Միաբանութեան
նախագահն է. որի ընտրութեան
կանոնները կանխորոշուած են Ազգ.
Սահմ. 21, 22, 23րդ յօդուածնե-
րով :
4. Միաբանութեան միւս ան-
դամները կը ընտրուին այս անգամի
համար արդէն գտնուած Միաբանու-
թեան այն անդամներէն, որոնք 4.
Պօլսի Ազգ. Երեսի. Ընդդ. մասովին
կողմէն ընտրուած Բնիկ Յանձնա-
ժողովի քննութեանց հետեւանքով
անբասիր լինելուն հաստատուած և
Ընդ. ժողովէն վաւերացուած են :
5. Ազգ. Ընդհ. ժողովի 4րդ
յօդուածին մէջ յիշուած, վաւե-
րացուած անդամներէն դուրս, մի-
աբանութեան պահուած անդամնե-
րը պիտի ընտրուին եկեղեցական
համարումար ժողովի պատրաստելիք
ու առաջարկելիք ցուցակէն՝ յիս-
կեղբ. Վարդութեան Վանորէից Խոր-
հուրդի քննութեան ու դիտողութեան
Խառն ժողովի առաջարկութեամբ,
Ազգ. Ընդհ. ժողովէն :

(Շարունակելի)

**ՍԻՆԵՄԱԹՕԿՐԱՖ
ՎԵՆԻՒՍ**
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԵՐ ԴԱՍՏԱՆԻ
Պուրազի Երևանի մէջ զին վրայ
ՆՈՐ ԲԲՕԿՐԱՄ

ԱՆՑԵԱԼԷՆ ՆԵՐԿԱՅԷՆ

Պարագաներ կան, որ և լուրը
տակի է ասացուածին հետեւելով,
լուրովն պահելը ամենամանր յան-
ցանք մը գործելու համարիչ է :
Անցեալ օրեր, մարդուն մէկը,
որ հակառակ իր երգելու եղանակը
փոխելուն և ձայնին աստիճանաւո-
րում մը տալուն եղիպտոսի Ս. Օ. ին
կը նմանէր, Վուսարեք ին մէջ ա-
ղիպտոսի ճիւղ կը բարձրացնէր թէ՛
« Լսարանը վրա... փլցնեն կոր... »
պիտի փլցնեն... օգնութիւն... »
մնչու կը հեռանամ... պիտի
հեռանամ... կրնամ հեռանալ... »
ազգակալոյ այդ idiotը, որ մինչև
հիմայ քանի մը տարիներէ ի վեր թիւ-
244 նամակատուփին բանալիէն մա-
տի չափ իսկ հեռացած չէ, այս սըր-
տակտուր վայնասունը ձգելով, ըմ-
բուսացում մը յառաջ կը բերէ այն
մտքերուն մէջ, որոնք այդ փլած
կամ փլցելիք լսարանին տարիներու
կեանքին հետ մտէն ծանօթութիւն
ունին, ու կ'ստիպուին անգամ մը
ինքնիրեն հարցնել թէ՛ ինչ՞ ծառա-
յած է սա Լսարան ըսուածը :
Լսարանասէրը զանազան շինու-
արդարացումներու կրթնած՝ փարա-
կուզէ մեզմէ, փարա՛ և ոչ ուրիշ
բան. փարա՛. վէստիլալ... :

Լսարանը կ'ըսէ, հաւանական
Ս. Օ. ն. գաղութին և միտքն էր.
ժողովասեղիկ էր. ու Լսարանը ֆէլ-
լահին անողք բահ ու բրիլիան կեր-
դառնալով՝ հայութիւնը կը զրկուի
ժողովասեղիկէ մը, ուր հայուն ճա-
կատակը պիտի վճռուէր, և յետ
այսու աւերականէր բուեր պիտի վա-
յին անոր փլատակներուն վրայ... :
Ասանցմէ զատ՝ կրնէ նաև թէ՛
իրաւ որ թէ՛ և հաստատութեան
վարկները հետամուտ են եղեր յար-
մար վայր մը վարձելու և հսն փո-
խադրելու Լսարան-Ընթերցատունը,
լայց յուսալի է եղեր որ իրենց հա-
մետ միջոցները թողարած չեն
ձեռքի տակ ունենալու ա՛յնպիսի
սրահ մը, որ կարենայ ծառայել իր-
եւ ժողովասեղի. ասիկայ մեծ պա-
կաս մը պիտի ըլլայ, և այսուհետեւ
ՕՏԱՐ սրահներու մէջ և ինչ սուղ
գինով՝ պիտի կատարուին եղեր մեր
հասարակային ժողովները : »

Ճշգիւմութիւն արտարուող այս
հրաւերներն են որ մարդուս միտքը
կ'ըմբոստացնեն ու կը սրեն յետագարձ
ակնարկ մը տարածելու - պայմանաւ
որ յետագիւններն չ'կոչուի - և քննե-
լու թէ՛ սա Լսարան ըսուած հասա-
րակային ժողովատեղիին արտագրած
արդիւնքը համապատասխան է ժո-
ղովուրդին քսակէն անոր համար ե-
ղած նիւթական կարեւոր զհոգու-
թիւններուն և թէ՛ մեր Ս. Օ. ն ma-
nie de (sale) de lecture է բունուած՝
ա՛յնչափ որ կ'ախտիկութենէ վազ
անցնելը բան մը չ'ըլլայ Լսարանէն
վազ անցնելուն քով, պէ՛տք է որ
եւլէ ալ ու ձախ հրաւերներ ուղղէ,
որպէ՛ս լսարանին, այդ հուսարարաց
ժողովասեղիկին համար նորանոր զո-
հողութիւններ յանձն առնէն սրգէն
չարք մը պարտաւորիչ յանձնառու-
թեանց ներքեւ ընկնած հայ ժողո-
վուրդը :

Հայաստանի սովեւաց համար
այդ ոճով արտաճմիկ կոչ մը արհա-
մարհելի բան մը չէ, ու ամէն մար-
դու ալ սրտին մտակ. լայց ինչ՞
ծառայեց սա լսարանը սա՛ չափ տա-
րիներէ ի վեր մեծամեծ զհոգու-
թիւններու փոխան, որուն համար այլ
ևս չ'մտածենք թէ՛ կարծէ որ յա-
ւիտենական մուսուլման մը մատ-
նուի այն :

Մենք ունինք վարժարանը. և
հակառակ որ Պօլսո բաշայի ծախքե-
րովը կառուցուած ըլլայ այն, և
կամ Հանդուցեալ Վանցի Ազգայ կա-
րապետ Գալուստի ձգած հասոյթ-
ներովը մատակարարուած, մեր ա-
մենուս սեփականութիւնն է : Ի
հարկին ազգին ընդհանուր շահե-
րուն վերաբերող խնդրոյ մը համար
երբ դուժարումի մը պէտք ունե-
նանք, կրնանք սրամագրել ընել
զայն նոյն իսկ քիչ մը խիստ միջոց-
ներով, առանց տիրող օրէնքներուն
դէմ մեղանելու : Սա մեր անկապ-
տելի իրաւունքն է, լաւ ըմբռնենք
ասիկայ :

Մենք ունինք եկեղեցին, որ
զարձեալ մեր անկապտելի սեփա-
կանութիւնն է. հոգ չէ թէ շինան
եկեղեցականներունը ըլլայ, զարձե-
ալ յիւստ քեռը մերինն է. ինչու
չ'պիտի կրնանք զիրար լուսաւորե-
լու և հանրային շահերը պաշտպա-
նելու հարցերով զբաղելու համար
այն տեղ չ'գուժարուիլ. ո՞վ պիտի

կրնայ արգելել զմեզ. Ո՛չ ապա-
քէն մենք մեր իրաւանց և պար-
տուց, օրէնքի և պարտաճանաչու-
թեան սահմաններուն մէջ պիտի
մնանք. ինչու՞ զլանալ մեզի մեր
սեփականութիւնը ազատօրէն և
պատշաճօրէն վայելելու :

Լսարանի մը հաստատուն և
կանգուն պահելու հետամուտը, մեր
իրաւանց և անանք պաշտպանելու ե-
ղանակին զեռակցութիւնէն զուրկ ըլ-
լալ կը նշանակէ, եթէ հայութիւնը
բաժան բաժան ընելու և հեղձե-
տէ անոր մասնիկներուն տիրելու
ներքին նպատակը չ'կայ ստոր մէջ :

Ըստ մեզ, հասարակային ժո-
ղովասեղի մը ունենալու համար,
ինչ որ մենք և ցարգ եղած է Լսարա-
նը, այդչափ աղմուկ յարուցանելու
հարկ չ'կայ և խոհեմութիւն ալ չէ :

Վեց դէպք՝ որ մը դրուուելու
վտանգին տակ. չորս լրագիր-
տասներկու ժողովական անոնցմէ մէկ
քանին կաւաւարարոյ անբարոյա-
կաններ ըլլալու պայմանաւ, մէկ եր-
կու Տնօրէն Սրճեփ մը՝ ո՛չ Օ. ն ո՛չ
Կ. ը. ըլլալու պայմանաւ, ու քսան
և չորս ՀՐԱՄԱՅՈՂՆԵՐ՝ երկար ու կա-
նանց յոյսալոյ մը ծածկուած մա-
ուսի մը հետ՝ ունենալու համար ա-
միտը 10-15 ոսկի ծախք ընել և ժողո-
վուրդին վրէժն անարանալ... այն ալ
կրիսիկական վայելեաններու մէջ. ա-
սիկայ լուրջ գործ մը չէ, քանի որ ժո-
ղովուրդը տակէ աւելին ունի. - Վար-
ժարանը և եկեղեցին. Լսարանը՝ կ'
տեղեւ. ուր հաւաքուած խոզմութիւ-
նը կրնայ ազատ շնչել. լայն տեղ
գրաւել. պատշաճութեան մէջ մնալ.
պատկառանք՝ ունենալ և զեղեցիկ
սեւը նոյն իսկ յարգել... : Այս
պայմաններուն մէջ մեր ակնար-
կած լսարանները շատ բարձր կը
մնան ո՛ւ է հասարակային ժողո-
վասեղիկներէ, որոնց մէջէն ալ բա-
րոյականը երեսը առած ու փախած է
եղեր, ինչպէս շատերը խոսքի նիւթ
ըրած են :

Հինքը պրպտել. զօրուոր փաս-
տեր մէջ բերել, այդպիսի հաս-
տատութեանց երեսէն ծագած ան-
համաձայնութեանց և դժտութեանց
չարքերը իրարու քով բերել աւե-
լորք է. Լսարանները - գոնէ մերի-
նը - իրեն բոլոր տկար կողմերը զոյց
տուած է և կուտայ հանրութեան :
Մէկ խօսքով, գրչի մէկ հարուա-
ծով պէտք է վճռել թէ՛ « Լսարա-
նի պէտք չունինք » սա պիշաւն
գոնէ գլխնուս պակաս թող ըլլայ :

Եթէ մինչև ցարգ 20 տարե-
ներէ ի վեր, Լսարանի համար ծախ-
ուած դրամներով գաւառներու մէջ
վարժարաններ բացուէին, բերա-
պատիկ աւելի օգուտներ պիտի քա-
ղէինք թերևս, քան Լսարանը՝ որ ոչ
մի օգտակարութիւն ցոյց կըցաւ
տալ ու չ'պիտի ալ կրնայ :

Հայ համայնքին պատկանող,
անոր բարեկաւուրութեանը հետ յարա-
բերութիւն ունեցող խնդիրները
պէտք է որ զուտ ազգային հաստա-
տութիւններու մէջ վճռուին : Ա՛լ
բաւական է լսարանական խաղըս-
թիւնները և չովինիզմ մտիկ ընե-
լը. նոր ազատութիւնը միթէ այդ
հինցած մտապահներուն վրայ ո՛ւ է
փոփոխութիւն չի՞ բերեր մեզի... :
ԱՐՇԱԼՈՅ

Ա.Ղ.Վ.Ա.ՅԻՆ

ԼՈՐՐԵՐ

ՀԱՐՍԱՀԱՐԻՉՆԵՐԸ

Արևելք կը գրէ .

Օսմանեան Երեսօխան Իրիզոր Զոհրապ և Վարդէս երէկ նախա- րարապետին ներկայացան և Վանայ հարստահարիչ և առաջակապետ Հիւ- սէինի, բռնապետ Շաբիրի, և Խի- զանի մէջ Գարսի, Մուշի մէջ Զա- լալտառիի որդի Սէյիդ Ալիի մա- սին խնդրեցին որ իրենց գանուած նահանգներէն որչիչ նահանգի մը Դատարանին առջև դատուին նազը Մուհամմէտի օրէնքով և արդարու- թիւնը գործադրուի խտուրտեմբ .

Հայ Երեսօխանները խնդրած են նաև որ Բարեբրի մէջ անդոր- րութիւնը վերահաստատուի և մաւ- նաւորաբար այս տարուան Մարտէն սկսեալ հայերէն զինուոր առնուի և զինուորական տարրը քննուի . քանի որ հայ ժողովուրդը անկարող է ա- տանկ տուրք մը վճարելու .

Իսկ զարով անցած տարիներէ մնացած զինուորական տարրի պա- զրոյններուն, անոնք ալ ընդհանուր ներման արժանանան առ հաշուով թէ՛ այս տարիէն սկսեալ զինուորա- գրութեանը, քանի որ բոլոր նախ- կին գրութեան իրենց ծնած օրէն զինուորական տարրը կը վճարեն, քան տարուան համար վճարած են արդէն, որուն ամբողջ գումարը կը հաւասարակուեն անցեալ տարուան զինուորական տուրքի պազը յեներն .

ԳԱՏԱԿԱՆ ՀԱՐՔԸ

Պատ. Բազաբ. Ժողովը անցեալ Փետր. ամսոյ մէջ երեք անգամ նիստ գումարած է . Տրուած որո- շումներէն Կալուածոց գտնի վի- ռարներէն մարտ իր շահեկանու- թեանը համար ծանուցեալ որոշման և գիւտնական բանաձևովը մեր բն- թերցողներուն կը ներկայացնենք որ հետևեալն է .

Առաջնորդարանի փաստաբանը տեղեկութիւն տուած է թէ՛ Աղէք- սանդրիոյ Խառն Դատարանաց վի- ռարներէն ատենը Փետր. 11 ին իր վճիռը արձակած է, որով Պետրոս Կարապետեան էֆէնտիի պահանջու- մը մերժուած է . Այս կը նշանա- կէ թէ՛ Առաջնորդարանի Էպիսկոպի- էպատիէին ծանօթ վարձակալու- թեան համար Կարապետեան էֆէն- տիի կնկած պայմանագիրը վերաքն- նիչ Առաջնորդարանի Էֆէնտիի Լամ- լուսի հետ ստորագրած պայմանա- գիրն հաստատուած է . Այս կեր- պով Առաջնորդարանը իրաւունք չունենար Լամլուսի ֆէտուան գլուխ տարին (125) զորք ալ սուգանք Կա- ռապետեան էֆէնտիի վճարելէ և Առաջնորդարանն ստիպեալ կըլլայ վարձքին հաշիւը Լամլուսի հետ կար- գաղբելու ֆէտուանը 465 զրէն այ- սինքն այն գնով, որ նշանակուած է Անդրանիկեան էֆէնտիի Լամլու- սի մէջ և կնքուած պայմանագրին մէջ և ոչ թէ 635 զրէն .

Եւ որովհետև Ալի Լամլուսի եր- կու տարի հողը շահագործելով հան- դերձ, այդ շրջանի վարձուց հաշույն բնաւ բան մը վճարած չէ Առաջնոր- դարանի սնուակին, Ժողովը որոշեց որ յիշեալ վճիռին վաւերական պատ- ճէնը չուտով ձեռք բերուի և մղում տրուի Պէնի Սիւէֆի տեղական դա- տարանին առջև Լամլուսի դէմ մի- կեոյն վարձակալութեան համար բացուած դատին, որ առկախ մնա- ցած էր խառն դատարանի վերա- քննիչ ատենէն վճիռը գեւա արձակ- ուած չըլլալուն համար .

Ասիկա Առաջնորդարանի որո- շումը և բաձատրելակերպն է, որ ղերմ չէ անհասկնալի և տարտամ մնալու հանգամանքէն .

Իմրագրութիւնս պիտի ջանայ ո՛չ միայն Աղէքսանդրիոյ Վերաբնե- նիչ Առաջնորդի վճարարոյն պատճէնը ձեռք անցնել և հրատարակել, այլ և՛ վարձակալութեան խնդրոյն ըս- կալուարութեանէն ի վեր իր քաղած ստոյգ ծանօթութիւններն ալ աւել- ցնելով վճարարոյն պարունակած ծա- նօթութեանց վրայ, լիակատար տե- ղեկութիւն մը պիտի տայ ընթերցո- զաց և ամէն անոնց համար մանա- յանգ, որոնք ազգային շահերով կը հետաքրքրուին .

ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԿԻՉԻՐԷ

Երկրագործական և Զարգացման Եւ Տնտեսական Ընդհանուր Կոնգրէսի

Ամսոյս 4ին Հինգշաբթի օրը տե- ղի ունեցաւ բացման հանդէսը Կէ- ղիբէի Երկրագործական և Զար- տարարութեան հանդէսին .

Կէս օրէն առաջ ժամը 11 ին ն . Բ . Խորհուրդը կը հետևողներով մէկտեղ համեմտով, պաշտօնապէս բացուել կատարեց խորհուրդը Եր- կրագործական Ընկերութեան և կող- մէ կազմակերպուած սոյն ցուցա- հանդէսին .

Ամբողջ Դիւանագիտական մար- մինը ներկայ էր, ինչպէս նաև քաղաքի երեսակները, որոնց մէջ իր յատուկ տեղը գրուած էր ն . Վ . Պօղոս բաշա .

Սիրալիը յարգանքներու փո- խանակուածէն յետոյ, ն . Բարձը- րութիւն Խորհուրդը մի առ մի այցե- լեց ցուցահանդէսին ստորաբաժա- նումները, ուր երկրագործները աղ- զի աղբի պտուղներ տալուարած էին և ճարտարարութեան բա- ժինները իրենց ներկայացուցիչները ունէին . Կարելի չէ թուել մի առ մի այն զանազանութիւնները որ ցուցադրուած էին երկրագործար- տաւարներու մէջ, և ն . Բարձրութեան համար ճիշտ մէկ ու կէս ժամ և աւելի պէտք եղաւ իւրաքանչիւր հատուածները աչքէ անցնելու հա- մար .

Ինչպէս ամէն տարի, այս տա- րի ալ Սինկըր և Ընկ . Եզիպտոսի Ընդհ . Տօրէնը Պ . Ապրապանէլ իր բազմաթիւ պաշտօններով և նո- ռահնար և հրաշագան ու բաղմար- ուեստ մեքենաներով կը մասնակցէր ցուցահանդէսին, ընդարձակ տեղ մը գրաւելով ցուցավայրին մէջ .

Սինկըր Ընկերութեան այս տար- ուան ցուցադրած մեքենաները ա- մէն տարիներէ աւելի գերազանց, պարզապէս հրաշալիքներ էին և բոլոր ներդասերներէն հիացական ակ- նարկներ կը քաշէին իրենց վրայ . Մեր սիւնակները շատ անբաւական են այս տարուան նորահար մեքե- նաներու գրուատիքը ընելու և ա- նոնց Եզիպտական ճարտարարու- տին վրայ բազմապատկած առաւել- ութիւնները մի առ մի թուելու և անոնց ընծայելիք դիւրութիւննե- րը քա՛նի մը տողերու մէջ սեղմե- լու համար .

Սինկըր Ընկերութեան յատուկ վրանին մէջ աչքէ չէին կրնար վը- ռիպիլ Եւրոպական ո՛ւէէ գործա- բանի արտագրութեան հետ մրցու- մի մտնելու գիւրութիւնը ընծայող թամբուտար զինքու . մասնաշատուկ տողուն մեքենաները, որոնք մէկէ շատ աւելի առաւելութիւններն հան- դէս կը բերէին, քիչ ժամանակի մէջ 24 է աւելի ճարտարարութեան զանազանութիւններ գործածելի վի- ճակի մէջ գնելու տեսակետով .

Արտարարի նորութիւնն ո՛ր էր կազմարարական մեքենան, որ ան համեմատ աւելի դիւրութիւններ և առաւելութիւններ ունի՝ գիրքեր և ստամբներ կազմելու համար .

Կարծէ որ կազմարարական գոր- ծով զբաղողներ հետաքրքրուին այդ նորերով մեքենայովը որ ժամանա- կի ահագին խնայողութիւն կրնայ պատճառել .

Կարելի չէ մոռարլ բամբակ զոռոյ մեքենան ալ, որ հնարարեան կարգ- մը գծուար կերարկելի գործիքնե- րուն պատճառած տաղտուկէն պի- տի ազատէ գործաւորները .

Ըսինք արդէն թէ՛ մեր էջերը անբաւական պիտի ըլլան մի առ մի նկատելու համար այն բոլոր հրա- շալիքները, որոնցմով Սինկըր և Ընկ . այս տարուան ցուցահանդէսը զար- դարած էր իր վրանագործիքը . Ու երբ մտածենք թէ՛ Սինկըր և Ընկ . վա- ճառմանց առթիւ մեծամեծ դիւ- րութիւններ ալ կընծայէ, այն ա- տեն յանցանքը կը մնայ այն գոր- ծաւորներուն և գործաւորութիւն- րուն վրայ, որոնք ծուլութեան՝ միայն ծուլութեան հետևանքով է որ իրենց մեքենաները Աղքատա- խնամ Ընկերութեանէն ձրի առնել կուզեն, առանց մտածելու թէ Աղ- քատախնամ Ընկերութեանէն տրուած Մեքենաները միջնորդէք մը մ'ալ կը ծանրացնեն աղքատներու վերա- գրուած այդ սնուակին վրայ .

ՏՊՈՐԲ ԺՊՅՏ Ի ՆՊԱՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՆՈՅ ԿՈՒՐԱՍՏՈՒԹԻՒՆԻՔ

Վ. սիմ . Արքայաւ Բաշա Բարթոլ 700, Վ . Երուսաղ Պէյ Աղաթօն 195 . Աղն . Սիմօն Էֆէնտի Սարգիսեան 300 Մեծ . Տիարք Եղարք Հաճէթեան 97,50 . Միքրան Դաղարօտեան 50 . Տելեմաք Բարթոդեան 50 . Արամ Փափազե- ան 50 . Մարտիկ Մակաթեան 48,75 . Եգնատիոս Սարգիսեան 30 . Զօրէն Առ- շատուրեան 25 . Տր . Մ . Շամբեան 20 Գրիգոր Գիրանեան 20 . Մկրտիչ Թէ- վէթէիան 20 . Տիկնայք Կատար Յա- կոբեան 40 . Արուսեակ Հանէսեան 20 . Դոււար 1666, 25 զր . ողլ .

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ՊԷՅՐՈՒԹԷՆ ՊԷՅՐՈՒԹԻ ՀԱՅ ԵՆԵՂԵՑԻՈՅՆ ՓԱՎՈՒՄԸ

Վերնագիրը կարգադրը՝ նա- խորդ բռնապետական ուժերը յիշե- լով գիտեմ՝ որ պիտի հետաքրքրուի Երասուրք ալ ունի, զի հայեկե- ղեցին գոցուած է միայն այն ատեն, երբ հայութիւնը բռնապետական հարստահարութեանց տակ արհմենը կը թափէր հեղեղի պէս, հայ եկեղե- ցին կը գոցուէր միայն այն ատեն, երբ հայութիւնը իր իրաւունքը կոր- սրնցուցած և անիրաւ բաղրակներու տակ՝ ո՛չ թէ իրաւունքը պաշտպա- նել՝ այլ գլուխն անգամ վերցնելու կարողութիւնէ զրկուած էր . Ժծ- ուած էր, կորոպտուած էր . Ըար- դուած էր . Սիչակ վերնագիրը կը վայլէր այն ուժերի յարու պարսք և իրաւունք ալ ևս անհետացած էր բոլորովին .

Բանի որ այժմ սկսան ամբողջ Օսմանցիները իրենց իրաւունքը և պարտքը ճանչնալ, քանի որ սահ- մանագրական ազատ ապարկէզ մը բացուած է ամեն տեսակ ազգի և տոհմի առջև, քանի որ միապետա- կան զօրաւոր շղթաները ալ ևս վը- շրուած, խորտակուած և անհետա- ցած են, ուրեմն ինչո՞ւ գոցուի Պէյ- րութի հայ եկեղեցին, քանի որ հայերը իրենց ներքին վիճակը բար- ւորելու առիթներ ունին, ինչո՞ւ հայ գաղութը զրկուի իւր կրօնական միութարութեանէն, ինչո՞ւ համար ե- րեք շարձի իրարու վրայ Աստուա-

ծապաչտական Ս . վայրը ողբայ իւր ընկճեալ վիճակին . վաճառականի խանութի չափ ալ կարեւորութիւն չունի հայ եկեղեցին

Խնդրոյն բուն իսկ շարժառիթը գրեթէ տղայական խաղալիք, սա- կայն այսու հանդերձ կարեւոր կեր- պարանք մը առած է Պէյրութի հայ մեծամասնութեան առջև .

Երուսաղէմայ Պատրիարքութիւնը Պէյրութի նախկին հոգևոր տեսուչ ճանաչեան վարդապետ Երուսաղէմ պաշտօնի կանչելով, յիշեալին տեղ առժամանակեայ կերպով կը փոխա- գրէ Դամասկոսի խտտովանահայր Տ . Եփրեմ վարդապետը . որ քանի- ցըս անգամ հրաժարած էր Դամաս- կոսէ և կ'աշխատէր որ ընդունուի հրաժարականը . Հարկ կը համարիմ յիշել թէ Պէյրութիցիք հոգևոր տես- չի և եկեղեցական ուէէ ծախուց հա- մար երբէք դրամ չ'են վճարէր, այլ Երուսաղէմայ միաբանութեանէն կը զրկուի Պէյրութի եկեղեցւոյ կրօնա- կան պաշտօնէին ծախսն ու ամսա- կանները .

Եփրեմ վարդապետ տեսնելով որ եկեղեցւոյ մէջ շարաններ և այլ հանդէսներ կը սարքուին, և Ս . վայրը զրկուած է իւր նուիրական յարգանքէն և ուր զաշխակներ կ'աժ- ուին և երգեր կերպուին նման Գաւէ շանքանի, և կորսնցուցած է իւր Սրբազան վեհօթիւնը . իբր կը- րօնական մը կ'առարկէ այս ամենուն, և սակայն գործող մարմնոյն ինքնա- հաւանութիւնը և իւր առժամայն գտնուիլը նկատի առնելով չ'ուզեր խնդիր հանել .

Պէյրութի Աղգ . վարիչները ինք- նահաւան, անփորձ, Աղգ . և եկեղ- ղեցական խնդրոց անպիտակ խել մը աղաներէ կազմուած ըլլալով, վար- դապետին առարկութիւնները իրենց Սիլիի գաղափարներուն հակառակ կը տեսնուի . Կսկսին երիտասարդա- կան լուսաւորեալ մտքի և քօշի տակ ստուրթիւններ հնարել, առարկելով թէ վարդապետը Պէյրութ եկած անգամալոյժ աղքատ մը չ'է ընդու- նած եկեղեցւոյ սենեակին մէջ, ուստի միապետական գրութեամբ մը պաշ- տօնապէս կը տեղեկագրեն վարդա- պետին որ 48 ժամէն զուրս ենէ Ա- ռաջնորդարանէն և մեկնի Պէյրութէն, առանց բանաւոր պատճառ մը ցուցնելու, գործ մը որ ազատ գա- ղափարի մը ծնունդը ըլլալէ կը գաղ- ըի, որովհետև աշատութիւնը օրին- քը յարգելու մէջն է տե- ղեկագիր մը՝ որուն ստորագրու- թիւնը Բեհհեբեան, Հաղաբապետե- ան, Կիւլպէնկեան և այս երեք անձնաւորութեանց կը պատկանի տեղեկագրին պայմանաւած կը լը- բանայ, 48 ժամ վերը՝ վաճառա- կանաց սպասուորներէն և մի քանի ուսանողներէ կազմուած բազմու- թիւն մը եկեղեցւոյ դուռը հաւա- քելով, « Պէտճէրպաչի » ներք վեր կեննեն և կը սպասուան վարդապե- տին, որպէսզի չուտով մեկնի, եթէ ո՛չ ժողովուրդը վարը կը սպասէ ը- սելով խեղճը դուրս կը հանեն . կա- նարգեն, և ին . և ին . Առաջնորդա- րանը և եկեղեցին գոցելով բանա- լիններ կառնեն . (կարծես թէ ի- րենց մասնաւոր մաղազան և) վար- դապետը կը դիմէ կառավարութեան, բայց կրօնական խնդիր ըլլալուն հա- մար անպատօն միջամտութիւնն ալ ապարդիւն կը մնայ .

Խնդիրէն լուր չ'ունեցող և այս տեսակ անտեղի և անվայել գործե- րէ գարշոց և օտարաց հանդէպ ա- մօթ զգացող ժողովուրդը կը յուզ- ուի թէպէտ, բայց միևնույն ատեն չա- փաւորութիւնը յարգելով կուզէ տե- ղեկանալ . այս պարագային մէջ ինք- նակոչ վարչութիւնը նկատելով որ խնդիրը ծանր կերպարանք մը պի-

ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անդամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւորապէս դործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ

ՅԱՏԿԱՆՈՇԸ ԻՐՆՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

տի առնէ և արդէն այս տեսակ ան-
 յարմարութեանց հանգէպ լեցուած
 ըլլալով զանգատներ բարձրացը-
 նող ժողովուրդը ալ աւելի պի-
 տի յուզուի, և այն ատեն իրենց
 ինքնաընտիր վարչութիւնն ալ մէջը
 պիտի խաղայ, մի քանի իրենց
 արբանեակ անակալէզներու միջոցա-
 կը քարոզեն ժողովրդեան թէ իրենք
 անձնակախ հետ դործ մը չունին.
 միայն կը բողոքեն երեսօտեմայ
 անկարգութեանց դէմ, (ս'ըր Պէյ-
 բուլ, ս'ըր Երուսաղէմի անկարգու-
 թիւն, ս'ըր այդ անկարգութիւնը
 ուղղելու համար Պէյբուլի մէջ կարող
 անհատ մը .) և իրազեկ նորա իրաւա-
 ստութենէն ելնելով Բահանայ մը բե-
 րել, քանի որ կուսակիցները իրենց
 գործին չեն գար

Ժողովուրդը՝ այս ծրագրին եր-
 բէք համաձայն չի գտնուիր, նկա-
 տելով որ նախ՝ երուսաղէմ կը հա-
 դայ եկեղեցական հոգևոր և նիւ-
 թական պէտքը, և ժողովուրդը
 դարձող համար յատկացուած 100
 ոսկին տալու գծաւարտութիւնը կը
 կրէ փոքրամասնութեան պատճա-
 ռաւ . երկրորդ՝ դարձող և եկեղե-
 ցին սեւէ հաստատուն կողմուած մը
 չ'ունին, եղածն ալ կը պատկանի Ե-
 րուսաղէմայ վանքին, և եթէ քա-
 հանայ մը բերուի դեռ 100 ոսկի
 տարեկան դուրմարի մը պէտքը անհը-
 րաժեշտ է և այս հարբեր ոսկին ալ
 եթէ բարդուի ժողովրդեան վրայ,
 անկարելի պիտի լինի հաւաքել և այն
 ատեն դարձողն ալ պիտի կաղայ և
 եկող քահանան ալ, եթէ գրամա-
 տէր չէ՛ պիտի մուրայ՝ և լալով
 պիտի մեկնի . ուստի հարկ կը տես-
 նէ Ընդհ. Ժողովոյ մը դուրմարման,
 որպէսզի ինքիւր լաւ ծեծուի և ա-
 պագան աչքի առջև ունենալով գոր-
 ծուի . Ժողովուրդը դեռ այս խոր-
 հուրքներուն մէջ՝ միւս կողմէն ինք-
 նակոջ վարչութիւնը կը հեռագրէ
 Պոլիս զանուոյ Իշմիրի նախորդ քա-
 հանայ Տ . Կորպայտին, իւր բաս-
 տրոճածի փեսային միջոցաւ, ուր ի-
 բրը հիւր կը գտնուի, որպէսզի
 դարմանեն ժողովուրդին յուզումը,
 որ եկեղեցոյ գոցուելէն յառաջ ե-
 կած էր . այս պահուն մինչև քա-
 հանային ժամանումը Հալէպէն եկող
 հիւր քահանայ մը վար կը գնեն
 ճամբէն, որով կը բացուի եկեղեցին .
 (Շարունակելի)
 (Պէյբուլ) ԱՂԱՏԱԿԱՆ ՄԸ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
 ԵՂՔԱՐԲ
 ԳՈՐԾԱՐԱՆ . ԺՈՂՈՎՈՑ
 ԱՁԳ . ԴՍԱ . ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
 ԹԻԻ 805
 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՍՀԻՐԻՒՆ ՀԱՅՈՑ
 ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Գահիրէի հայոց Առաջնորդա-
 ղանը այսու կը յայտարարէ թէ Բա-
 րաքիս Ս . Առտուածածին Եկեղեց-
 ոյ սեփական և Եղիպտոսի Պէհէրա-
 յի Միտիթիէթին Բաֆր Տաւուար
 Մէրքէզին Սիտի Դալի գիւղին մէջ,
 Պէսլաուուի մօտ, 984 ֆէտաան 3
 գրաթ և 20 աէհիմ՝ գետինը հինգ
 վայրկեան հետի է Մասրաֆ նուպա-
 ըիէ ըսուած կայարանէն, որ կը
 գտնուի Բաֆր Տաւուարէն Տաւան-
 հուր տանող Տէլթա Լայթի երկա-
 թուղւոյ վրայ :

Այս գետինը գնել փափաքողք
 պէտք է որ տեղւոյն պահապան Սու-
 համէտ Ապտուլլահի առաջնորդու-
 թեամբ հողը այցելեն ու քննեն .
 որով ետքը իրենց office կրնան ներ-
 կայացնել և ստորագրել աճուրդի
 Գայմէին ներքև և իրենց առաջար-
 կելիք գնոյն 10 առ 0/0ը հնչուի գրու-
 մով իւր ապահովութիւն պէտք է
 յանձնեն Առաջնորդարանիս և կամ
 քաղաքիս անուանի պանդանիքէն մէ-
 կուն մէջ դուրմարը յանուն Առաջնոր-
 դարանիս տէփօ ընեն և ընկալադի-
 րն յանձնեն Առաջնորդարանիս :

Թուականէս սկսեալ մինչև երեք
 տմիս, պայմանաժամ սահմանուած է
 այս officeները ընդունելու համար :

Այդ ժամանակամիջոցին մէջ
 գնել փափաքողք վաճառման պայ-
 մաններուն կրնան տեղեկանալ Կիրա-
 կի և տօն օրերէ զատ ամէն օր ա-
 ռաւօտեան ժամը 9-12 և իրիկունը
 ժամը 3-5, Առաջնորդարանիս Դի-
 ւանատան մէջ ի Պէն էլ Սարէն Գա-
 հիրէի :

Առաջնորդարանիս իրեն կը վերա-
 պահէ առաջարկելի ո՛ր և է գին (offre)
 ընդունելու կամ մերժելու իրաւուն-
 քը, մերժման պարագային offre
 ներկայացնողը Առաջնորդարանէ ո-
 չինչ պահանջելու իրաւունք ունի, ի
 բաց առեալ իր տուած ապահովու-
 թեան գումարը, որ իրեն կը վերա-
 դառնայ :


Առաջնորդական փոխանորդ
 Յարութիւն Բահ . Յակոբեան
 12 Դեկտ . 1908

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԻՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիւսիոյ Օթէլի
 ճիշտ գիմաց . Գաֆէ Տը Լա Պուրի կեց
 Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱԲԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՍԱՃԻԻԴԵՐ ՈՒՆԻ
 Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են և ասոնցմէ
 մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :
 400 է աւելի վկայական և մեքենանով փորձարուած, երաշխաւորեալ մեքենաներ,
 ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁՄՏՐՈՒԹԻՒՆԸ
 ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
 Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .
 ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
 ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՐՈՒՆ ԵՒ ԹԱԴԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵԱՑ
 ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ՅՅԻՂԱԿԱՆ ՅԱՆ

Ձրի դասեր և նորոգու-
 թիւններ, Սինկլեր մեքենա-
 յից համար, յաճախորդա-
 տուններուն մէջ :
 Վճարմանց դիւրութիւն
 Փոխանակութիւն հիներու
 և նորոգութիւն ամեն կարգի
 Մեքենայից



ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Այ հող մի՛ ընէք թէ ձեր կարի մե-
 քենաները Շայնալի մը գլխուն վրայ
 գրած հոս ու հոն պիտի փոխարէք նո-
 րոգելու համար :
 Պ . Սարգիս Թաշճեան՝ իրեն գիմոյ
 չափ մը յաճախորդներին քաջալերուած,
 ատենէ մը ի վեր իր պաշտօնը թող-
 լով, յատուկ կարգ պատրաստած է եւ իր
 շրջուն ու շարժական խանութը «Վա-
 րօն» ին (անոր պատիկ ձիուն անունն է)
 բարձած ամէն թողէ կանցնի ամէն օր
 եւ ամէն ժամ :

Ձիւքը ճանչնալու դժուարութիւն
 չկայ . Պատիկ ձիուն մը քաջած կառ-
 քին վրայ երբ մեքենաներու գործիք-
 ներ տեսնէք, որուն շրջ կողմը ա-
 մեն լիզուով գրուած է, մանաւանդ
 Réparation des Machines, անմիջապէս
 կ'անձ «Վարօն» յիշեցէք . և կամ
 քիչ մը անդին Սարգիս Թաշճեան արտա-
 նել ուզեցէք, իր կապոյտ կտաւէ
 postային մէջ, անիկայ ոչ միայն կա-
 ըի մեքենաներու նորոգութիւն կը-
 նէ անման յաջողութեամբ և երաշ-
 խաւորեալ, այլ և նոր մեքենաներ
 ալ կը հայթայթէ :

Չ'ոտնանք նաեւ կազի վառա-
 րաններու և ֆոնօկրաֆներու նորո-
 գութիւնը և նորերու հայթայթումը :
 Պ . Թաշճեան այս գիւրութիւն-
 ները բնծայելով, իր նմաններուն ծա-
 ույթ ըլլալու գոհունակութիւնը պիտի
 ունենայ, և քիչ մ'ալ դրամ չահիլ պիտի
 ուզէ, իր պիտիակներուն զատարա-
 կութեանը յատկացնելու համար :

ԾԱԽՈՒ ԳԻՐԻՔԵՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէ-
 բիֆ բաշայի տպարանին զիմաց՝ կը վա-
 ճառուին հետեւեալ պրօշուրները :
 Ա . ՊԱԼԵԱՆ
 ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
 Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
 « 2 Հիւլէն 50 »
 Թիւ 3 պրօշուրը թէև հրաշալիք մը
 բայց ինչ ինչ նկատուիներով զանց կը-
 նենք անունը յիշատակել կարճ ժամա-
 նակի մը համար . գինն է մէկ ֆրանք :
 Դիմել Արշալոյսի նմապրութիւնէն
 զատ Հեղինակին հասցէին որ է .
 Mr. A. Balian
 Le Caire

ՄԸՄՍԱՐ ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կը հայրալոյս տեսնել, որամական
 փոխաւարտութիւններ, կանաւորեալ
 սեւեակներ, հալի, խանութի եւ
 կաշուածներու փոխաւարտութիւն գոր-
 ծաւարտութիւն :
 Իր կեդրոնատեղին է Պաղատ
 Մալուրի գրան քովի երկու սրճա-
 րանները ամէն օր ժամը 7 էն մին-
 չև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն
 9ը կէս օրէն յետոյ :